ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԲԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

27.04.2014 09:06

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նոր շենքի բացման հանդիսավոր արարողությանը հաջորդել են մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են եղել Հայաստանի փաստաբանական ինստիտուտի զարգացմանը:

Միջոցառումների ընթացքում ապրիլի 23-ին տեղի է ունեցել քննարկում «Փաստաբանական ինստիտուտի մարտահրավերներն ու արդի զարգացումները» թեմայով՝ Ֆրանսիայի, Վրաստանի, Բելոռուսի, Հունաստանի, Լյուքսեմբուրգի, Բուլղարիայի, Ռուսաստանի փաստաբանական համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Մասնակիցները քննարկման առարկա են դարձրել՝

• անվճար իրավաբանական օգնության շրջանակները, հանրային պաշտպանի ինստիտուտը (ֆինանսավորում, կադրերի ընտրություն և վերապատրաստում, վերահսկողություն, էլեկտրոնային համակարգերի ներդրում),

• փաստաբանական գաղտնիքը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համատեքստում,

• փաստաբանի պաշտպանվածությունը քրեական վարույթի շրջանակներում (փաստաբանին վստահորդի հետ նույնականացման անթույլատրելիությունը),

փաստաբանի թեկնածուների ուսուցումը և փաստաբանների վերապատրաստումը, հեռավար վերապատրաստման հնարավորությունները և փաստաբանական կառույցների համագործակցության հեռանկարները.

«Ֆրանսիական ԿԱՌՊԱ կոնցեպտի ներդրման հեռանկարները ԱՊՀ պետություններում»:

Քննարկման ավարտին Հայաստանի փաստաբանների պալատի և Վրաստանի, Մարսելի ու Բելոռուսի փաստաբանների պալատների միջև կնքվել է համագործակցության հուշագրեր:

Նույն օրը՝ ապրիլի 23-ին, ՀՀ փաստաբանների պալատի պատվիրակությանը ընդունել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը:

Վեհափառը իր հայրապետական օրհնությունն է հղել հայ և արտասահմանցի գործընկերներին:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը շնորհակալություն է հայտնել Վեհափառի կողմից փաստաբանների

ընդունելության ցանկությանը ընդառաջելու համար և կարևորել այդ հանդիպումը: Գարեգին Երկրորդը հայրապետական ողջույներն է փոխանցել փաստաբաններին և խոսել հայ եկեղեցու դերի ու նշանակության մասին:

Գարեգին Երկրորդի խոսքով պետականության բացակայության տարիներին եկեղեցին իր վրա է վերցրել ամենածանր հարվածները բոլոր հարցերում՝ վերապրել է հայոց ցեղասպանությունը, խորհրդային անաստվածությունը: Եկեղեցին է սատար կանգնել հայապահպանության գործին սփյուռքահայ համայնքներում: Խոսելով Հայոց ցեղասպանության մասին՝ Վեհափափառը հայտնել է, որ. ‘Վաղը մեր խոնարհումն ենք բերում հայոց ցեղասպանության զոհերին և մեր շնորհակալությունը հայտնում դատապարտող ու ճանաչող երկրներին և մեր աղոթքն ենք բերում ձեր գործի հաջողության համար’:
Ապրիլի 24-ին փաստաբանների պատվիրակությունը եղել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրում՝ Ծիծեռնակաբերդում: Պատվիրակության անդամները ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանի գլխավորությամբ իրենց հարգանքի տուրքն են մատուցել 1.500.000 զոհված հայերի հիշատակին:
Արտերկրից եկած փաստաբանները լրատվամիջոցներին տված հարցազրույցներում խստորեն դատապարտել են 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած ոճիրը իրականացնող թուրքական պետության գործողությունները հայոց ցեղասպանության մերժման կապակցությամբ: Վրաստանի Փաստաբանների պալատի նախագահ Ջազա Խատիաշվիլին նշել է, այն ցավը, որ տեսել է հայ ժողովուրդը, չպետք է կրկնվի և թուրքական իշխանությունների գործողությունները դատապարտելի են: ‘Թուրքիան պետք է հաշվի նստի իր անցյալի հետ ու ճանաչի հայերի և մյուս ազգային փոքրամասնությունների հանդեպ իրագործած սպանդը’,- նշել է Խատիաշվիլին:
Արտերկրից ժամանած հյուրը եղել են Հայաստանի պատմամշակութային վայրերում ծանոթացել հայոց պատմությանն ու մշակույթին:



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })